ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ Իմ հայրենիքը (2 դասաժամ), Իմ հայրենիքը և աշխարհը (2 դասաժամ), Բնություն (6 դասաժամ), Աշխարհագրություն (6 դասաժամ), Հայաստանի աշխարհագրություն (2 դասաժամ), Բնագիտություն (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3-4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/, (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ):

3.Անձը հավաստող փաստաթուղթ,

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն /առկայության դեպքում/,

5.Ինքնակենսագրություն /Ձև 5/,

6.Այլ պետությունների քաղաքացիներ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող իրավունք,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/ առկայության դեպքում/,

9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

10.Հաստատությունից դուրս մնալու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած):

11. .«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայություն դեպքում նաև 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:

12<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-15:00 բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին -ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն ՀՀ Արագածոտնի մարզ գ. Լուսակն, 1-ին փողոց, շենք 18:

Տեղեկությունների համար զանգահարել 098 692-530
հեռախոսահամարով:

«Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինություն